



ՀՐԱՄ

ՊԱՇՏՈՆԱԹԱՐԹ
ԽԱՐԻՍՈՒԹԵԱՄ
ՀԱՅՈՒ
ԵՐՈՒՍԱԼԵՄԻ

Օ. ՏԵՐԵ

ի

1976



ՀՀ
192

(2)

Սիոն

Տ. ՏՈՐԻ - ՆՈՐ ՃՐՁԱՆ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՆԱՊԵՐ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

1976

Յուղիս

Թիւ 7

1976

July


No. 7

S I O N

VOL. 50


A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



St. James Press
Jerusalem





ՎԵՐԱԴԱՐՁ ԱՂԲԻՒՐԻՆ

— • —

Փոքրամասնութիւններու ողբերգութեան նուիրուած մէր խմբագրականներուն մէջ՝ շեշտած էինք թէ մեր գոյութիւնը կարևուալ շարունակելու համար անհրաժեշտ էր հաւատարիմ մնալ, ոնցեալով պայմանաւոր, մեր հոգեկան արժէքներուն:

Մեր այժմու սերունդը, արտասահմանի բոլոր երկիրներուն մէջ, կանգնած է պատմութեան խաչածե ուղիներու վրայ: Քսաներորդ դարը սև գուռ մը բացաւ մեր սերունդին առջեւ: Մենք դառնացած սիրով միայն դէպեքերն ու դիպուածները կ'արձանագրենք, թաւալգլոր օրերու ետեէն, այրուած կոպերով որոնելու կտոր մը գութ և արդարութիւն: Այսօրուան մեր կեանքը անակնալներու շարոց է, փոփոխական և արտառոց, որովհետև պատմութեան մէջ կարեռը շատ անգամ ան է, որ պատմութիւն չէ, այլ ներքին հոգեկան այն յարակցութիւնը, լոռութիւններու անգունդը, որուն մէջ նետուած քարերը կ'արձագանդեն միայն գալիքի հաշոյն:

Մեր ենթագիտակցութեան մէջ կը ծփան հակասական ուժեր, և մեր միտքը կեանքի փոթորիկներուն դէմ կը պարզէ թոյլթեր միայն, կամ ուրիշ բոյնին մէջ կը զետեղէ իր հաւկիթները: Անդունդի մէջ քար նետելը կամ հոսող ջուրերուն վրայ ալիւր մաղելը, ցարդ շահ մը չեն բերած մեզի: Մեր ամենամեծ թշնամիները իմաստակներ եղած են, անոնք որ ուրիշներու աչքերով նայած են մեր իրականութեան: Մեր կեանքի կը խոն ու թափը իրենց ձեռքին մէջ բռնած են շատ յաճախ, հասակով ու միտքով փոքր մարդեր, մեզի բերելով իմաստութեան փշրանքներ, ժամանակին կեր

ըլլալու սահմանուած։ Մարդեք՝ որոնք ուզած են և կ'ուզեն, իրենց աղքատ միջոցներով չափել մեր առջև բացուած անդունդը և կըշ-ոել արձագանգը։

Անշուշտ ցեղային և կրօնական գիտակցութիւն մշակելու գործը գիւրին չէ։ Զեն բաւեր ներարկում և եղածը ըմբռնելու կարողութիւն և հանրացում, այլ անհրաժեշտ են՝ մտածումի, զգացումի և կամեցողութեան այն կերպերը, որոնք տակաւին երէկ յատուկ էին մեղի։ Մեր պատմութեան մէջ մենք ունեցեր ենք շրջաններ, ուր մեր տոհմային ոգին, ցեղային ընդունակութիւնները և ժամանակի տուրքերը հաշտուած և յօրինումի ելած են, տալով մե-զի մեր ոսկեղարը, արծաթի գարը։

Դեռ երէկ՝ կր հաւատայինք «թէե փոքր ածու, բայց մեր մէջ ևս գործուած են մեծամեծ քաջութիւններ և առաջինութիւններ», ու կրնան գործուիլ դեռ։ Թէ երբէք չենք քնացած մեր բախ-տին վեայ, որովհետեւ մեր սրտին մէջ անկորուստ կը մնար փրկու-թեան յոյսը, հաւատքի մատեանին մէջ արցունքով և արինով տողուած այդ մուրհակը։ Եւ այս անոր համար, վասնզի ունէինք հաւատք, որ ուրիշ բան չէր, եթէ ոչ այն ներքին վիճակը, որով անհատները, ինչպէս աղգերը, իրենց մէջ պահեստի ունին և որուն չնորհիւ կը դիմաւորեն իրենց գոյութեան սպառնացող վտանգնե-րը։ Անշուշտ թէ Հայ ժողովուրդը իր հոգին չէ պարպած հաւատ-քէ, բայց մենք կը գտնուինք վիճակներու և երեսոյթներու դիմաց՝ որոնք լուրջ կասկածներու և տրտում հեռապատկերներու կը տա-նին մեր միտքը ցեղային այն բոլոր առաքինութիւններու նկատ-մամբ, որոնց չնորհիւ բան մը արժած է և կրնայ արժել տակաւին մեր ժողովուրդը։

Եթէ ուղենք հոգեյատակել այդ վիճակը, այսինքն բոլոր ախտանշումներուն բուն ախտը, եթէ կարելի է այսպէս ըսել, զայն կարելի է տեսնել նիւթական տուեալներէ միայն առաջնորդուելու այն կեցուածքին մէջ, որ ինչպէս ամբողջ աշխարհին, նոյնպէս և մերն է օրերու այս տրտմութեան և հերքումին մէջ։ Այսօրուան աշխարհը կը դառնայ գլխաւորաբար նիւթական առանցքներու չուրջ, և այս մտահոգութիւնը պէտքի մը գոհացում ըլլալէ աւելի, վերածուած է այլևս հոգեկան կեցուածքի։ Տխեղդ նիւթապաշտու-թեան այս դարը զուրկ է հոգեկան թոփչքներէն, անոր համար ա-նոր կը պակսի հերոսը, սուրբը, մարգարէն։ Հոգին միայն կրնայ նուածել նիւթին այս սիրակալութիւնը, որուն ճանկերուն մէջ կը հեծէ մարդը, փոր մը հացի և քիչ մը հաճոյքի համար ծախելու շափ իր ազատութիւնը։

Նիւթապաշտիկ այս զգացումները եթէ ուրիշ ժողովուրդ-ները կ'ընեն անտարբեր և բութ՝ ոգեղէն իրականութիւններու նը-կատամամբ, կը վերածեն մեր ժողովուրդը յուսահատ և նկուն խրլ-եակներու։ Ժողովուրդի մը ուժին և մեծութեան գաղտնիքը նիւ-թական չէ, ժողովուրդները չեն մեռնիր իրենց Փիզիքական վէրքե-

րէն, այլ հոգեկանէն։ Մենք կը տառապինք այսօր գիտակցութեան տաղնապէ մը, իբր արդիւնք մեր ժողովուրդի արկածահարութեան։ Ծատ բան այլափոխուած է մեր ներսը, աւելին՝ հայ հոգին իր խաչելութեան ճամբաներուն՝ փոխան զօրանալու, նուազած ու րեկուած է։ ահա տարբերութիւնը երէկուան և այսօրուան հայուն, և այս՝ աւելի տիտուր է մեղի պարտադրուած սպանդէն։ Որքա՞ն բան պիտի աւելնար մեր մէջ, եթէ մենք ունենայինք գիտակցութիւնը, ներկայութիւնը և մասնակցութիւնը մեր անցեալին, իր ներկային մէջ ամբողջ ընելու համար Հայ Սփիուրքը։ Աղջերու կեանքին մէջ յաճախաղէս են այս կարգի աղէտներ, սակայն վրտանդղը կը մեծնայ երբ անոր կը յաջորդէ անզգածութիւն և անդիտակցութիւն։ Բնական մաւն է այս, ոչ ոք կրնայ զայն արգիլել, եթէ հոգեկան նոր ուժեր չըխին իր ներսէն և չվերընձիւղեն զինք բողբոջ առ բողբոջ։ Խորաքանչիւր հայու հոգիին մէջ ճակատագրապաշտութիւնը իր պատմութեան մեռած մասն է։

Հայ ժողովուրդի ներկայ գիտակցութիւնը դժբախտ գիտակցութիւն մըն է, որովհետեւ տարիներէ ի վեր ան կը դիտէ իր կեանքը այդ կեանքէն դուրս հայեկներէ։ Մեր խօսքը չի վերաբերիր անոնց՝ որոնք մաս չունին հայ ժողովուրդէն, այլ անոնց՝ որոնք այժմէականութեան վերածել կը ջանան մեր յոյսը, մեր իրաւունքները, մեր արժէքները, մեր սէրը և մեր հաւատքը, և կ'ուզեն շարունակել մեր պատմութիւնը իր ստեղծագործ և փառաւոր էջերուն վրայ։ մեր մարտիրոսագրութիւնը՝ որ զմեղ կատարելութեան տանող ճամբան եղած է իր կամքով, իր զօրութեամբ և խորհուրդով։ մեր գրականութիւնը՝ որ մեր հաւատքին մաքուր ոսկին ու արծաթն է եղած, իբր արգաղիր նուէր մեր իտէալի առարկային, մեր երագին։

Մենք պէտք է վերագտնենք հոգեկան այն հաւասարակշութիւնը, արժէքներու այն հիմնաքարերը, որոնք ճակատագրականօրէն մերն են։ Վերականգնել մեր մէջ հոգեկան աղջուականութիւնը, առաքելական գիտակցութիւնը որ մեր նախնիքներուն եղաւ, հոգեկան կայսրութիւնը, մեսիականութեան խորհուրդը որուն ծարաւն ունի այսօր բովանդակ մարդկութիւնը։

Ե.

Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Բ

Ես Այգեստանիդ վարդերն եմ քաղեր,
Վարդէ պըսակով պըսակեր ինքս ինձ,
Ծառերդ ինձ համար ծիրան՝ վար շաղեր. . .
Մօր մը պէս պահէ, Վան, յուշերս անջինզ:

Տրդաս, այնպիսի սիրով խոր՝ նայէ ծիլին ու ծառին,
Հողին ու քարին, սա եկէջազ լեռներու պարին,
Եւ անվերադարձ մեկնող սա շուրի սահանքին վէտ-վէտ,
Որ երբ դուն անցնիս, քու սիրոյդ տիպը չը զբնջուի անհետ:

Ամբողջ կեանքիս մէջ՝ ֆեզ որոնեցի, ո՞վ խորհուրդ անունզ...
Մերք ծաղիկներու բուրմունքէն՝ կարծես զզգացի քու շունչն,
Մերք մեծ Մոնազին հեծքը՝ կարծեցի ֆեզ ինձ կը քերէր,
Մերք շող մը ֆեզմէ՝ քերաւ ինձի մօրս աղօք-քին մըրմունզն:

Քեզ փընտուեցի զիրքերու մէջ, մարդերու քով իմաստուն,
Ցահախ վախով մը սըրտարեկ, բայց մերք յոյսով հաստատուն,
Չը գըտայ ֆեզ խորհուրդ խորին, ու մընացի ես անճար. . .
Հիմա սակայն մօտ եմ ֆեզի, պիտ' միանանք ես ու դուն:

Ինչ որ ուզես՝ բընութիւնը պիտի տայ ֆեզ,
Պայման է բայց՝ բաղանքիդ նիզդ ալ միանայ,
Ու բաղանքէդ զերդ մորենի այրիս անկէզ,
Բընութիւնը որ մըրմունիդ չը դիմանայ:

Տիեզերքն եքէ չունի նըպատակ՝ պէտք է ըստեղծել,
Որ Ունայնութիւնը մարդու հոգին չը կըրնայ եղծել.
Որ մարդն անցեալի բանի մորենի այրիս անկէզ,
Պէտք է յաւերժին տանող ուղիներ' իր առջև գըծել:

Կեանք, ա'լ չունիս առաջուայ՝ դուն համն ու հոտ, գոյնն ու
Ոչ անցեալէն կը քերես անըրջային հրապոյր. [Բոյր,
Ըսէ «հուսկ բանք»ըդ ուրեմն ու հեռացիր վերջնապէս,
Չունի արեն ա'լ բովչանք, ոչ ալ գեփիւռը համբոյր:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՅՈՒԺԵԱՆՆԵՐ

ՆՈՐԻՑ ՄԻ ՊԱՅԺԱՌ ԶՈՐԱԿՈՐ ԳՐԻՉ

Ս Ա Մ Ա Ր Ո Ւ Հ Ի Ն

Գեղեցիկ, կատարեալ արուեստով, գուսպ ու լակոնիկ, բարձր ճաշակով է ներկայացուած Սամարուին, քիչ առղերի մէջ անչափ շատ ասուած։ Մի փոքրիկ նորավէպ, մի տիեզերք սէր։ Փակ, չարտայայտած զգացումի մի անհունութիւն մի քանի էջի մէջ։

Բարձր սէրը հաւանաբար այն միակ մթնոլորտն է որով մարդ կարող է արտայայտել հոգու աշխարհի բոլոր նրբութիւնները ու վեհութիւնները և հենց այդ պատճառով է որ հանձարեղ գործերը, սկսած Աւետարանից մինչև Քսաններորդ դարի մեծութիւնները, իրենց խորունկ ու վեհ ժաքերը արտայայտում են մեծ սէրերի լոյսի մէջ։

Յոզմած ու ծարաւ,
Զըրիորին առջև,
Յիսուս կանգ առաւ։
...

Իր գլուխին վըրայ՝ խոնջէնք ու փոշի,
Եւ աշխերութ մէջ՝ տակաւ հեռացող
Ու անեսրիզոն խորումկ երկինքներ։
Կը նայի կը մնա,
Եւ կը խընդրէ քուր։
Զայնը Յիսուսին, լընին մէջ իմկող
Ասուդի մը նըման,
Փոշուր առ փօշուր կ'իջմէ ամկէ մերս,
Ծըմելով հազար ալիքներ լոյսի,
Եւ շըրջամտակներ։
Մըրիմ, անորոշ ըզգացումներու։
Կը սահի, յուշիկ, գոյլմ անոքէն։

Բիրտ ու վայրագ միջավայրում կինն ամէնուրեք սպասում է կատարեալին, մեծ ու ժաքուր սէրոյ։ բայց կեանքը նրան շարումակ մխրճում է տիղմէջ։ Կանանց կերպարները բոլորը վեհ են, գեղեցիկ և ենթակայ սիրոյ ասուածային լոյսին, որին հանդիպելով՝ նրանց մէջ արթնանում են ամենաբարձր ու գեղեցիկ զգացումները, ամենախորունկ, անզիջող սէրը։

— Դում քամի՞ ամգամ,
Մարդաց սիրտն ի վար,
Դոյլ արակեցիր, ո'վ Սամարուին,
Եւ ամէն անգամ, զուրի փախարէն,

Գըսար ափ մը տիպմ։
Կիմը չի գիտեր թէ լոյսն այդ ճայթիմ,
Խճշմ՝ մաւթերում մէջ իր կը սուզուի։
...

Իր նայուածէիմ մէջ կը վարձատըրուիմ,
Անդարձ, խորտակուած տարիմներթ բոլոր՝
Մամարուիիիմ։
Որուն ըլլրուիմ մէջ, կիրանայ յանկարծ,
Երկիմներուն չափ խոր ու անանուն,
Կայլակը օսկի, կայլակը կըրակ,
Երազն անաւարտ, բայց միշտ անյագուրդ,
Եւ միշտ վըրիպած։
Հզացումներէն ամենէն մեծիմ։
— Մարգարէ մը դում կը քրիս ինծի,
Ռ'վ օսուրամիս։
Եւ քո խօսներուդ հայելիիմ մէջ,
Կը մեռմին դարեր, կ'ապրի աղագան։

**Ապա արւում է իմաստալից զրոյցը սիրոյ մեծութեան, մարդու բնու-
թեան գեղեցկութիւնների, աստուածայորդ սիրոյ արարիչ ուժի մասին.**

Իրմա'վ կը խօսիմ աստղերթ աստղերու,
Երկիմներ՝ երկրիմ։
Ի՞ր շաղերում մէջ կը բանան քերքեր՝
Մաղիկն, ու եսգին։
Իրե՞ն կը յասին նայուածքը մամկան,
Աչերք կընո՞յ
... Սիրտք մայրերում։

**Եւ փշուում է կնոջ մէջ ամբողջ անցեալը, կործանւում է ու նորից ըս-
տեղծւում աշխարհը.**

Հեռացող աղուոր այդ Գալիլիացին,
Իր սոկի դոյլով,
Ալուծ էր իրմէն ինչ որ իմք ումէր։

**Եւ երբ մի անցորդ նոյն յըհորի մօս գումեց Սամարուհուն երիտա-
սորդ Գալիլիացու խաչուած մեռնելու մասին՝**

Կամնիքը դոյլին, մէկէն, գարձաւ ժար,
Եւ մընաց կախուած՝ զարերում վերև։

**Սալումէն — կոչուող ծաւալուն պոէմից մեր Հոգին է խուժում անսո-
վոր գաժանութիւններով ու գեղեցկութիւններով աւելուծուած մի աշխարհ, ուր
իրակնանք է ու մահ, ուր օդը համակուած է ոտագնապներով ահեղագոչ։**

Մի կողմից անիծակուռ փշերով անապատի քարակոնկոճ մարգարէն իր
ահուելի անիծքներով՝ ընզովք էսկ էր մարմին հարգած, հորիզոնները հարուա-
ծող։ Միւս կողմից միւների պէս հալչող Սալումէն՝ փրփուրի գեղեցկու-
թեամբ, որ փախչում է իր ճակատազրից և չդիտի ի՞նչ է որոնում։

Գետափին մօս՝ շուշան մէկմշապէս՝
Աւազներու սիրուէն բըխուզ։ . .

Բայց ահա յօշոտուող հոգով լսում է ժարդարէին՝

— Վայ ազջըկան,
Մարմինը որուն, զինն է արեան
Իր հայրիկին . . . :

Հայրը, ժայրը, ողջ շրջապատը, որոնց պատճառով նա պատժուած է
ամենադաժան կերպով : Եւ ահա ժայրը .

— Շուներին ուսեն պիտի անոր
Մարմինը գարշ,
Որ ամուսինն իր տռաջին,
Շըդքայապիրկ' դըրկեց Հըռովմ,
Ու պառկեցաւ ուրիշին ծոց :

• • •
Որ սեփական ազջիկն ահա
Կը յարգարէ
Սիրահարին իր մահինն» :

Միւս կողմէց աչքին երեսում է շղթայապիրկ ժարդուն տանող ամրոխը .

Սա կըսործաւ արիւնն իր մեջ .
Փըրքան, ըսես, ծաւմկերն իր խեղն .
— Մողէզն անզամ գարշամէ կը զգայ
Պունիկ մօրմէդ .
Թու'րս ելիր, գու'րս :

Սալոմէն արդէն դրսում էր, բանափ դուռը փակուած էր և նա արդէն
ոչինչ չէր լսում, չէր զգում . միայն հոգու խորըու ատելութեան ու զզուանքի
կրակն էր ծաւալուում, միայն շուրջերն էին արիւնուում ատամների կրճ-
առումից, մարմինն էր ցնցուում և խեղզուում էր վրէժի ծարաւից :

Այնուեւսեւ տեսնում ենք զոհարների մէջ հեղեղուած Հերովդիային,
թագաւորին, պալատի խրախնանքն ու Սալոմէի խենթացած պարը, Մարգա-
րէի կորած գլուխը բաց աչքերով սկուտեղի վրայ, կատաղած վայրագ ամրո-
խին և գեղեցիկ վարդապետի դատաստանը :

Այսպէս մի փոքր պոէմի մէջ կայ ժամանակի որքա՞ն խտացում, դէպ-
քերի ու դէմքերի որպիսի՛ բազմազանութիւն, մէծ երևոյթների ընդհանրա-
ցութիւնը, ուսմուռնեներ, փիխոսփայութիւն, պատմութիւն, ժարդիկ . ժարդիկ՝
ահաւոր ճակատազիրներով, խորունկ խորքերով, ներքին նրբութիւններով, սի-
րոյ թրթիռներով, կենդանի, պատկերաւոր ու հաղորդական : Եւ ամրողջի ֆո-
նի վրայ ճիւնաչուշան Սալոմէն՝ իր ներսի կրակներով, իր ահուելի վրեժառու-
թեամբ :

Կարգում ես այս ուժեղ ու վառ գործը և ափսոսում, որ այսպիսի հե-
ղինակը իր ամրողջ էութեամբ չի նուիրուում դրական կեանքին ու աշխարհին :

Նեղասի Լուսար — Մի խսկական ճերմակ եազիկ է այս ամէնի մէջ :

Դեռատի գեղեցկուհուն բերել են վանք, մայրապետը արտում նայել է
նրան ու նեղոսի Լուսաս անունն է տուել, բայց Լուսասը չի դիմանում վանքի
ամայի պատերին : Կեանքի յորդացող ուժը գուրս է նետում նրան : Աղջիկը իւն-
թանում է սիրոյ, ժաերմութեան կարօտից : Ու չէկ աւազներից փախչում է Լու-
սասը, փախչում է դէպի կեանք, դէպի մարդիկ :

Տարիմեր Յետոյ երկար բանաստեղծութեան մէջ, մահացող կնոջ վերջին ժառութեան են անցած կեանքի, մարդու և բնութեան մասին, տրուած մի զարմանալի թեթև գառնութեամբ։

Ինչպէս տեսնում ենք, մեր Աստծոյ ծառայ բանաստեղծը անդրադարձել է կնոջը վերաբերող բոլոր հարցերին, ի հարկէ Սուրբ Գրքի սահմաններում միայն։ բայց ի պատի բանաստեղծի պիտի խոստովանենք, որ կանանց կերպարներով տուել է նա սիրոյ գեղեցիկ զօրութեան, բարձր նուիրուածութեան սքանչելի օրինակներ։

* * *

Նարունակում ենք թերթել Ընտիր իշերը և բանաստեղծի տաղանդը գտնում ենք մի նոր ուժ ու փայլ ստացած, իր նոր շարքում, որը խորագրուած է՝ Անոնք որ չնա մեռնիր— «Ես Եհովան եմ այս գիշեր», «Ես Յուգան եմ այս գիշեր», «Ես Սողոմոնն եմ այս գիշեր» և մի շարք այլ գործեր։ Այսաեղ ուշագրաւ են՝ «Ճեսիլներ արտում օրերէն» և «Անցորդը բաժինները, որոնք հեղինակի ներքին աշխարհը շատ աւելի բացող ու ներկայացնող խոհական գործեր են, արժանի յատուկ ուսումնափութեան։

Վերոյիշեալ չարքերից ինձ համար առանձնապէս նշանակալից են՝ «Ես Արտաւազգն եմ այս գիշեր բանաստեղծութիւնը և Սուրբ Մեսրոպ» հրաշալի պոէմը։

Մի առանձին պրկուած հոգով, ջիզով ու ամրութեամբ է մշակուած Մասեաց լանջերի խորքում զղթայուած Հայոց Արտաւազգի լեգենդը, որի ըրդաները կոռում և ամրացնում են հազարաւոր գարբիններ՝ «Հազար ամէ մինչ հազար ամ»։ Իսկ ժողովուրդը սպասում է նրա գալուստին, սպասում է որ կրարի նա անէծքի զղթաները և գայ փրկի գերուած, աւերուած հայրէնի երկիրը։ Եւ կուռ ու կոփ սպատկերներով գծագրում է երրեմնի չէնչող հայրէնիքն ու բոլոր կործանութեների, արիւնաւերների ցնցող տեսարանները։ Լաւագոյնը այս զործերի հիմքում եղած ամուր հաւատքն է և անբեկանելի լաւատեսութիւնը։

Մենք կը սպասեմք քու մեծ կաչին
Կործանելու աշխարհն այս պիզծ,
Եւ կամգնելու արդարութիւնը քու փառքիր... .

Կորկ' շրպքագ,
Նետուկ' վըրան աստաւածագեղ
Քու նըժոյքին,
Թափն արձակ' խոյանէներուագ լեռնանուէր,
Ազատութեան ու Քաջութեամ... . .

Մեզ արժաններ ըրէ կը ընկին։
Վըրան անոյշ հայրեթիքին։
Քեզ կը սպասն մեռեներոը մեր դարերուն
Եւ ոգջերը մեռեներուն։ . .

Հասկանալի է թէ խօսքը հայրենիքի մասին է։ Սակայն հեղինակը շատ ժամանակակից ժամանող է և իր այսօրուայ խորհուրդն է տալիս աշխարհով մէկ սփռուած իր վտարանդի ժողովրդի համար։

Դարմ է անցեր աստաւածներուն,
Ասպետներուն։

Փառք, հայրենիք աղազակող իմ ժողովուրդ,
Որ հեքիարէն կը պահանջես

Նրիվարմներ ու արժաներ .
Կը հաւատաս մեռլներում :

Այս ժամփ' դար բար եմ ես .
Ամէն Հայու հոգիին մէջ
Արտաւազդ մը պէտք է կանգնի :
Կը խորսուհին հէֆիարք իմ մին
Որ կը յանձնէ ազառութիւնը մեր ցեղին
Մէկ հերսուին .
Դարմ է հիմա հազարներու :

Բազուկ բազկի , և սիրտ ի սիրտ
ՄԵՐ կը շինենք հէֆիարքը նոր :

Ամենախորունկ , ոգեշաղախ գործերից մէկն է «Սուրբ Մեսրոպ» պոչ-
մը , որը համակ աղօթք է , գորովանք է ու երախտիքի լոյս է , կանչ է ու կա-
րուտ մեծ զգացումքի :

Մեր գոյութեան ամենամեծ իրադարձութեան շարադրանքն է : Մեր
գպրութեան հիմնադիր Հօր կեանքին ու աշխատանքի լուսնդէն պատկերը :

Սո մեր գիր ու զրչի հիմնադրման օրհնանքն է ու վերակոչումը : ԲԱ-
փիւռք աշխարհում նորից օտարանում է մայրենի լեզուն ու նուազում է ոգին
հայրենի , և բանաստեղծը նորից օգնութեան է կանչում մեծ լուսարարին :

Հոգեբուխ հիացումով , երախտիքով ու սորից սուրբ պատկերումով
ներկայացնում է բանաստեղծը երիտասարդ , իմաստուն ու Հոգեիոռով վարդա-
պետք ուսանելը օտար ափերում , վերադարձը , երկրի ժողովրդի կեանքին խոր-
քից ծանօթանալը ու մեծ հանճարի հոգու խոռվքը սեփական գիր ստեղծելու
համար .

Տըմոյն լոյսին տակ մումերուն
Ժամանակին ,
Ան կը քերքէր ցան ու խըռավքն
Մեր աշխարհին ,
Որ իրեն հետ կուլար կտրկար ,
Մազաղարի էշերմ ի վար . . .

Որպիսի՛ երախտիքով ու լոյսերում ծովացած սիրով է նկարագրում
բանաստեղծը սրբազան ջանքերը , խոռվքները , և տառերի գիւտի աւանդական
ստեղծումը , նրա գերին ու նշանակութիւնը :

ՄԱՐՕ ՄԱՐԳԱՐԵԱՆ

(Ծար. 2)

ԳՐԱԴԱՎՈՅԱԿԱՆ

ՑՈՒՅԱԿ ԶԵՂԱԳՐԱՅ ՈՐ Ի

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Մատենաշարին մէջ լոյս տեսնող այս հատորը կ'ամփոփէ Հանդէս Ամսօրեայ հայագիտական թերթին շատ մը տարիներու ընթացքին հրատարակած ձեռագրական մանր ցուցակները, որոնք առանձին հատորով հրատարակուած չեն: Թիւով քան այդ մանր ցուցակներուն մէկ հատորի մէջ համախմբումը մեծ դիւրութիւն կ'ընծայէ բանաէրներուն օգտագործելու զանոնք, քանի որ ներկայ հրատարակութեան առթիւ կազմուած է յատուկ անուններու աւագ կարևորութիւն ունեցող ցանկը:

Աւելի քան երկոտանեակ մը երկիրներու մէջ ցրուած 245 ձեռագիրներու նկարագրութիւնը պարունակող 480 էլիոց այս ստուար հատորը իր գոյացութիւնը կը պարտի հանդուցեալ Հ. Համազասպ Ռոկեանին, որ յլացած էր նման հատորի մը հրատարակութեան գովելի գաղափարը: Այդ անխօնչ բանասէրին տարածած մասով ընդմիջուած աշխատանքը յանձն կ'առնէ շարունակել Հ. Օգոստինոս Սեբուլեան և յաջորդութեամբ կ'աւարտէ, ուրախութիւն պատճառելով հայագիտական նիւթերով պարապողներուն:

Այստեղ թերևս կ'արժէ նշանակել մի քանի ուշագրաւ վրիպակներ, որոնք չեն մտած «ըստագրութիւններու» շարքին մէջ:

1.— Էջ է, «Սասանեան», պիտի ըլլար՝ Սասանարեան:

2.— Էջ 2ր, վարէն տող 1. «Ծննթի», պիտի ըլլար՝ Ռձթ:

3.— Թիւ 48 ձեռագրի գրչութեան մասին տրուած տեղեկութիւնները հաստատ չեն թուիր: Մկրտիչ արենան կ'ըսէ. «Գրեցի գրիւէս ի Գանձասար»: ուրեմն իր գրչին կը պատկանին ժամանակագրական մանր տեղեկութիւնները և ոչ թէ՝ ամբողջ ձեռագրին ընդօրինակութիւնը:

4.— Էջ 15ր, վարէն տող չորրորդ, «ծածագիր», պիտի ըլլար՝ ծածագիր:

5.— Էջ 33ա, կը պակսի Ընծայական Զօնի առաջին հատուածին ութերորդ տողը՝ Եւ Աստուծոյ ընձայ տուեալ:

6.— Էջ 106ա, տող վերէն 25. «Մըլտածու», պիտի ըլլար՝ Մըլտածու:

7.— Էջ 134ա, «Կայիփոսի Վանք», պիտի ըլլար՝ Կայիփոսի Վանք:

Կը կրկնենք մեր ուրախութիւնը այս հրատարակութեան առթիւ, որ կարեն նպաստ մը կը բերէ մեր ձեռագրական թանկագին ժառանգութեան յաւագոյնս ծանօթացման և օգտագործման:

ԵՐՎԱԿԱՆ

ԳԻՏԱԿԱՆ

ՀՅԵԱՄՈՂԵԶՆԵՐՈՒԻ ԿԵԱՆՔՆ ՈՒ ՄԱՅԸ

ԽՆՈՒՆԴԻ ԵՒ ՄԱՅԸ

Վերջապէս, գերանամողէսը դարձաւ և լողաց դէպի մօրուտը՝ խարակի ոտքին։ Հոն չնչեց օզը ամէն ուղղութեամբ։ Հոտ մը ժիայն ծանօթ թուեցաւ իրեն, ու գիտումնաւոր դարձաւ դէպի մօրուտի ծայրամասը գտնուող պտերները, որոնց ընդմէջն երեցաւ արու գերանամողէսը զոր վհառելու եկած էր։ Անոնք իրարու մօտեցան հանդարատօրէն, ուղղաձիգ սուզուեցան մօրուտին յատակն ի վար, և քով քովի, իրարու քսբսեցին իրենց վիզերը։

Էդը մօտեցաւ արուէն և փոքրիկ սանաւորը դիմեց երկու վիթխարի արարածներուն զուգաւորուիլը՝ ջուրին մէջ։ Անոնց զանգուածային մարմինները իրարու փաթթուեցան անհաւատալի բարդութեամբ։ Զուգաւորումը եօթը երկիվայրկեան տեսեց։ այսպէս փաթթուած մնացին գրեթէ ամբողջ նախամիջօրէն։ Երբ զատուեցան, իւրաքանչիւրը իր ճամրով լողալով զնաց միանալու երածակին, որ կը բաղկանար երեք հսկայ արուներէ, եօթը էտերէ և հինգ երիտասարդ կենդանիներ։

Բաւական ատեն վերլ, էգ գերանամողէսը անդիմադրելի ուրիշ պէտք մը ևս զզաց։ Լճեկերն ի վեր զնաց մօտակայ աւազուա տեղ մը, ոչ հեռու կը բարարձունքէն։ Հոն, պոչը ես-առաջ շարժելով մէջտեղը փոս մը չինեց, տեղաւորից ինքոյնիք անոր մէջ ու թաղեց ցուուին ու անճոռնի առաջարունքները։

Ինը-տասը օրէն 37 ինչոր հաւկիթներ ածեց, իւրաքանչիւրը կաշենման կեղևով մը պատուած։

Երբ վերջացաւ իր գործը աւազուտին մէջ, երկար աշխատեցաւ պոչով աւազը հրելով բոյնին վրայ և բերնովը փայտի կտրնեն և ինկած տերեններ զետեղելով բոյնին տեղը՝ ուրիշ կենդանիներէ հաւկիթները պահելու համար։ Եետոյ յամրացայլ վերադարձած ծովալինը ու մոցաւ հաւկիթները ածած տեղը։ Եր գործը վերջացած էր։ Եթէ հաւկիթներէն սողուններ դուրս զային՝ աղէկ։ այլապէս ան նոյնիսկ տեղեսկ անդամ պիտի չըլլար անոնց բացակայութեան։

Այս բոպէին էր որ կը սպասէր մուշտակաւոր կենդանին։ Գերանամողէսին ծովալին ինչելուն պէս՝ հոն զնաց, զննեց բոյնը և տեսաւ որ հաւկիթ մը պէտք եղածին պէս թաղուած չէր։ Հաւկիթը իրմէ աւելի մեծ էր և երկար ատենուան մը համար բաւական սնունդ պիտի հայթայթէր։ Փորձառութեամբ գիտէր թէ հացկերոյթը աւելի ախորժելի կ'ըլլար եթէ քանի մը օր պասէր պարունակութեան կարծրանալուն։ Շատի, այս անդամ, պարզապէս չննեց իր ապագայ խնճոյքի առարկան և ուղովը վրան գիշ մը աւելի հող հրեց, որպէսողի ուրիշ մէկը չկարենար նշմարել տեղը։ 37 հաւկիթները տաք աւազին մէջ չորս օր թրծուեցն ետք՝ համածնողը վերադարձաւ իր տեսակէն երեք ուրիշներու հետ և սկսան յարձակումի վերել հաւկիթին վրայ, կրծելով անոր պնդացած կեղեր։ Ցաղողութիւն չունեցան, սակայն իրենց այս ջանքերը հաւկիթը աւելի մէջտեղ հանեցին։

Այս մէջոցին հոյամողէս մը, նախապէս երեցածներէն շատ աւելի փոքր, նշմարեց հաւկիթը, կոտրեց մէկ ծայրէն և կերտ պարոնակութիւնը։

Համաձնողները չվախցան, փոքր հոյամողէսին հեռանալուն պէս, վազեցին հոն եկան, վատահ թէ բաւրած միա մնացած էր կոտրած ձուախեցին մէջ՝ խըն- ճորք մը սարքելու շափ:

Միւս հաւկիթները ատենին ճադ եղան՝ արևին ջերմութեամբ միմի- այն թխուած: Յօ ճագեր չնչեցին օդը, բնազդով գիտէին ծովալիճին ուր ըլլա- լը և մէկ գիծի վրայ ճամբար ելան ապաւինելու ջուրին պաշտպանութեած:

Շարախինը քանի մը կանգուն հազիք բառաջացած էր, թռչող սողունն մը նշարեց զանոն, վայ խոյացաւ, առա մէկը իր կառւցին մէջ իր անօթի ձագին տանելու համար: Սողունը երեք շրջան ըրաւ, ամէն անգամ ճադ գիրա- նամողէս մը առնելու համար:

Հաւկիթը ուսող փոքր հոյամողէզն ալ սենու շարախինը, հոն փու- թաց ու ճագերէն վեց հաս կերաւ: Ասոր վրայ միւսները ցրուեցան, բայց բը- նազդով մը միշտ գացին դէսիք ժավալիթք: Ակզրնական ՅԵ-էն մնաց հիմա 26 հատ, որոնք շարդունակ ենթարկուած էին յափշտակիչ թռչուններու և մօսկեր հոյամողէզներու բարձակուններուն: Ձադ առզուններէն 12 հատը վերջապէս ջուրը հասած: բայց երբ ժաման մէջը ուսկրու դլանով ու որածայր տառնաշա- րով խոչոր ճուկ մը անոնցմէ եօթը հատը կերաւ: Ճամբու ընթացքին, ուրիշ ճուկ մը տեսաւ անոնց վերը խօզալը և մէկը կերաւ, այսպէս որ 37 հաւկիթնե- րէն մնացին միայն և համա՞ հաւանական վերապրողներ, որոնք ի վերջոյ միա- ցան 15 շափահաս գերանամողէզներէ բաղկացած ընտանիքնեն:

ՄԱԿԱՆԻՐՈՒՄ ՔԱՂԱԿԱՈՐԸ

Թէկ փոքրերը կը մեծնային, սակայն մայր գերանամողէզը չէր գիտեր միոնց իր ճագերը ըլլալու: Այսուհենդեռձ, կեանքի խաղերը անոնց սորիկեցնե- լու բաց ան բաժնից երամակի միւսանողամներուն հետ: Երբ քիչ մը մեծցան, բարեկ, օճանաւած մարմինները բաւական աճած ըլլալով, մայր գերանամողէ- զը, ընկերացած շնչառուս արուր մը, զանոնք առաջնորդեց դէպի գետը:

Ջուրը տանելին քիչ վերջ, արուր, յանկարն երկամախ խոնչեց և իրր- ցածին շափ արտ սկսաւ վերաբանակ ծովալիթը: Այս պահուն մայր գերանա- մողէզը հանդիսառու նզաւ ամենին՝ առասափազդու տեսարանին զոր արևա- գարձային մացառուտըը կը յայտնարերէ: Դէպի խումբը կեցած, երկու ու- ժով հրէշային արարած մը՝ օգը կը պատէր: Աւնէր 18 ոտք բարձրութիւն, հակայ պլուխ, կարճ վիզ և շոշողուն առանամաշար մը:

« Ամէն շափի երեք նեխուակ առզուններ՝ գոյաւրին ումէին ցամաքի վը- յայ, ծպվու և օդի մէջ: Հակայ հոյամողէզները երբ կը տիրապետէին երկրին, միամատմակի գոյաւրին ումէին հսկոյ առզուններ ծպվու և օդի մէջ տիրապե- տող: այս վերջինները քէպէսկ հոյամողէզներ չէին — եակառակ անոնց հեռա- ւոր ազգակցութեամ—, սակայն բոլոր ալ առզուններ էին նոյնէան մնծ ու կա- տաղի որքան հոյամողէզները: Նզվու և օդի այս եակայ առզունները քէ մաս- կեր էին և քէ՝ բաւակիթը: Առզունները, առ ի գիտուրին, առաջին արարածնե- րը երան ցամաքի վրաց ապրէ կրցած՝ հարզ մը առզուններ սակայն, ցամաքի վրայ ապրելէ և շնչելէ եսմ՝ առարջինակիրէն վերապարան կրկին ջուրին, ծովալիթ: պիտի պանդուպատրնամն այս շրան ենթուքքրական երկույթին: »

Այլամողէզն՝ երբ, մասակերներու, թագավորը, այնպէսի զօրաւոր կզակ- ներով, որ եթէ խանէն գերանամողէզն միզը՝ կրնոր կիսել: Գաղանը ջուրը մտաւ յարձակելու համար: մայր սողունը պոչովը մտրակեց զայն և հազիք շե-

դեցուց անոր շառաջընթացը : Ակնթարթի մէջ, սակայն, պազանը վեց րթաշափ հրէշային իր ճանկերը բարօքն իրեց անոր աջ կողին ու դուրս քաշեց :

Ընկրկեցաւ, չտկեց ինքզինք և խոյացաւ արու գերանամողէցին ետեւն, որ կրցածին չափ արագ կը նահանջէր գէպի ծովալինը . հասաւ . այլամողէցին շարժուժը տեւի էր : Սարսափեցնող ու յանկարծակի ոստումով մը՝ այլամողէցը խածաւ անոր վիպը իրանին միացնող ողնութիւն և այդշափ :

« Մէծ հիգոնի՝ մասկերը վիթիւարի սովունք գէպի ցամաք քաշեց : Եւ նոյ, առանց թող տայիս իր արիւուս որսը, սկսու նլորել ու քաշեցի անոր մարմինը մինչեւ որ իրար միացան իր հութեստ ափուները և միսի խոչըր կորոր մը պատառալոյն եղաւ : Այս ատեն միայն այլամողէցը ձգեց անոր մարմինը և ետ քաշուեցան Դունչը միաս ողին մէջ, ան կոտիկը կը սեղափոփէր այնպիսի ձևով մը որ կարինար հսկայ պատառը վար սահեցնել՝ խռչափողին մէջ : Երկու ննզամ ևս պատառը մարմինը միսի մեծ կտորներ փրցնելու : Եւոյ, երկար առեն մնաց մեռած մարմինին քով, կարծեն ինչ ընկլիքը խորհրդածելով : Կոկորդիտուներ մօանցան իրենց բաժինը առնելու, բայց այլամողէցը Հնուացոց զանոնք : Արինի բարի հոտէն հրապարուստ չաղղակեր սողուններ հասան թրոչելով, սակայն անոնք ալ ես մզուեցան :

Ալլամողէցը, հոն կանգնած, առապրէկ կը կարդար ծովալինին և մացառուացին միանգանային . առչեցուցիչ Փիղիքական կատարելութեամբ մը, ճիշտ գերանամողէցին պէս բարգ կտորացուածք ունէր : Իր կոտիկները վիթիւարի էին, անոնց ներսի ծայրերը վեց մատնաչափ հասու մկաններու միացած՝ այնքան զօրաւոր էին որ երէ խանճին հառը՝ մէկ կողմէն միւսը կրնային անցրնել : Ակուներուն ծայրերը ոքանչելիօրէն սղոցուած էին, կրնային թէ՛ կրուքէլ, թէ՛ սղոցեկ թէ՛ պատառէլ :

Ալլամողէցը մտրակեց իր կարճ պոչը և քրթմնջանքի մռնչիւններ արձակեց : Աւրիշ գիշատիչներ երևցան, մէջը ըլլալով երկու փոքրիկ հոյամողէցներ : Բոլորն ալ հնուու մնացին զազանէն : Խորոր կառոր մըն ալ պատաց մեռած մարմինը, բայց շկրցաւ կը մել : Դուրս նետեց, հրայրքու նայեցաւ ներկաներուն, նորէն փորձէց : Աւազախուռ միւսը բազմթիւ վայրկեաններ մնաց անոր բաց բերնին մէջ . յետոյ, երկարած վիզէն վար սահեցաւ : Մարտական առուրածքուով մը կոկորդին խորէն, այլամողէցը խոյացաւ գիտողներուն կողմը՝ անդեցիկ, յետոյ լրբօքէն ձգեց-դնաց :

Հեռանալուն պէս աղբակերները եկան, ոգէն՝ սողուններ, ծովայի ճէն՝ կոկորդիլուններ, երկու ակոսկ ցամաքի հոյամողէցներ և այլեւայլ համածնողներ :

Մինչաղին, 33 թոննոց մեռած գերանամողէցը աներեւութացած էր : Իր զանդուածային կմախքը միայն կը պառկէր գետափին :

ՃԵՄՉ ՄԻԶՆԷՐ

Թրգմ. ՀՐԱՆԴ ՆԱԳԱԶԵԱՆ

⁷ *Allotaurus* — այս անունը յամարէն երկու բառերէ կազմուած է . *Allos* — ուրիշ և *auros* — մողէզ, պրէ՛ այլամողէզ : Իրակամութեամ մէջ անուիթօրէն կատափի այս հոյամողէզին համար տրամած անունը թէ՛ մկան և թէ տափակ է : Ան իր գորաշրջամիմ ապրու միւս հովոյ տպաններուն — բուտակեր կամ մասկեր — սպասողիք և պատուհանը եղած է, ինչպէս Ասիոյ տափառան Անրէն Արևմուտք արշաւող Արխլամ՝ և՛ հռոմայեցիներու, ե՛ւ բարբառաներուն :

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՄՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՐՈՒՍԱԼԵՄ

1975 - 1976

1976 Յունիս 13, Կիրակի օր յ. մ. ժամը 6.30ին տեղի ունեցաւ Վարժարանիս Ամավեցի Տարեկան Հանդեսը, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

Հանդեսը ուներ իր գրական-գեղարվեստական բաժինն, նույրուած մեծանուն բանասելիք-լրագիտ Աւետիք Խանակեանի ծննդեան հոգիւրամեայ անուկատութեան: Առաջերաներ Աւետիք Խանակեանի սեղծագործութիւններն վեցուած խմբեզներով, արտասահմանաւորիւններով եւ երեք ասենախուութիւններով ենթայցուցին Խանակեանի կեանն ու գործք:

Հանդեսի երկրորդ մասին մէջ կատարուեցան վկայականաց եւ մրցանակներու բառեամբ, որուն ընթացին Վարժարանին Տեսուչը կատարեց իր տարեկան դպրոցական ընդհանուր ու հետեւեան է: —

Ամենապատիւ
Տ. Եղիշէ Ս. Արք. Տէրաէրեան,
Քարիխնամ Պատրիարք Ս. Աթոռու,
Գեր. Արքազան Հայրեր,
Հոգեշնորհ Եղբայրներ
և յարգելի հանդիսականներ.

Ամավեցի այս հանդիսութեան առիթով Զեղ կը ներկայացնենք մեր վարժարանի առաքեան աղեղեական աղաղեականի բարեկան, ուր գուց պիտի գոնչէք կարելի եղածին չափ լրիւ Ս. Թարգմանչաց Վարժարանի կրթական դորձանելութեան պատկերը

Ներկայ տարւոյ ընթացքին Մեր երկսեռ աշակերտութեան թիւը եղած է 240, բաժնուած հետեւու ձևով: —

	Մանէ	Աղջիկ	Գումար
Երկրորդ. բաժին	25	30	55
Նախակրթարան	70	55	125
Մանկուպարտէզ	30	30	60
	Համագումար՝	240	
Այս 240 աշակերտներէն 36ը Ցատուր-			

եան սաներ են թիւրուած արժամանակն, մէծ մասամբ Թուրքիայէն, որոնք իրենց բնակովոյրիրուն մէջ չունենալով կարեւիրութիւնը հայեցի աւսման, մէր մօտ կը ստունան առողջ հայեցի ու կրծնական դաստիարակութիւն, Այս աղջոքը միզի կը հասնի ընդհանուրապէս անտեղիսկ իրենց մայրենի լեզուին, մշակոյթին և պատմութեան, անհազորդ իրենց ազգային սեպանութեան: Մեր վարժարանէն ներս աննոնք դաստիարակութիւն և ստունավով այդ բոլորով, կը վերադասնան իրենց տառները այլափոխուած նույներով: Այս ձեւով ցարգ մեր գպրոցական դաստիարակութեան անցնելով արտասահման գեկնած ան 6 տարիներու ընթացքին, արտասահմանունէն եկած 100 աշակերտներ: :

Կ'արքէ այս առթիւ ցիւտակել ցառու կապէս նէ այս բարի գործին նիւթական ծանրութիւնը իր վրաց վերցուցածէ Աւմերիկանի ծանօթ բարեկարգ Տիաք Տառաւր Տառուրիան իր քանի մը գաղափարակից ընկերներով միասին, որոնց նկատմամբ ունինք չնորհակալութեան զշա-

պուլիմեր յանուն բարերարեալ մանաւկներուն:

Մեր աշակերտառւթեան վարժուքարդ և գպրցական ընդհ. կորդապահական և բարձրական մակարդակը միշտ եղած է և այս տարի այ եզաւ շատ գոհացուցիչ: Զենք ունեցուծ որեւէ կորդապահական դժուարութիւն:

Վարժարանիս ուսուցչական կազմը կը բազկանար 25 երկսեռ ուսուցիչներէ, որոնք փոյթեառնդն գործակցութիւն ցոյց տուին մեզի հետ յանձնանձեյու մեր զուակներու լուսագոյն դասարակաւթիւնը: Հանդիսական այս տոիթով անցաց բոլորին կը յայտնենք Տեսչութիւնս գոհացաւանքն ու չափահակալութիւնսերը:

Մեր ուսումնական ծրագիրը շարունակեցինք ըստ Նախօնիթացի, իրազործելով երկրորդական վարժարաններու յատուկ General Certificate of Education (G.C.E.) անդգիտական ուսումնական ծրագիրը, լաւեւել Հայ լիզուի և Հայագիտութեան զունացան ճիշդերն ու դասընթացքները: Մասնաւոր աշխատանք թափացինք որպէսզի Հայերէն և Անգլերէն լեզուներու յասամջացիալ մակարդակին հետ համահաւատուր մակարդակ ունենան նուե Արաբէրէն և Երրայիրէն լիզուներու ուսուցումը: Այս տեսակէտէն ունիայտ նուազաւմներ կոտարեցինք տարրույս ընթացքին, որով մեր աշակերտները դայտարկելու հարեւիլութիւնը կ'աւելական մասնակցեւու G.C.E.ի Երրայիրէն լեզուի քննութեանց, իսկ երկու տարիներէ ի վեց անոնք արդէն իսկ կը մասնակցինք Արտերէն լեզուի G.C.E.ի Advanced Level քննութեանց և ձեռք ձերեցին աշշ քուրու յաջողութիւններ:

G.C.E.ի քննութեանց մէջ շտա բառցարիկ և անհախնընթաց արդիւնք ձեռքբերին մեր անցեաց տարրուան շրջանաւարանները, բացարիկ արդիւնք նացնիսկ համեմատած մեր քաղաքի օտար վարժարաններու ձեռք ձեռք յաջողութեանց և արդիւնքներուն:

Այսպէս G.C.E.ի քննութեանց մասնակցող մեր երեք շրջանաւարանները աւանցան հետեւել յաջողութիւնները: —

Անու Ադամեան, G.C.E.ի քննութեանց մասնակցեցաւ 10 նիւթերով, որոնք բարոր ալ անցաւ յաջողութեամբ: Այդ նիւթերն են: —

Հայերէն լիզու	Ordinary Level
Արտերէն լիզու	Advanced Level
Անգլերէն լիզու	Ordinary Level
Անգլերէն լիզու	» »
Անգլիական գրականթ.	» »
Գատմութիւն	» »
Անսարանութիւն	» »
Մաթեմաթիք	» »
Ֆիզիք	» »
Բէմիսարի	» »

Տալիսա Տէմիբեան G.C.E.ի քննութեանց մասնակցեցաւ 10 նիւթերով և յաջողութեամբ անցաւ տասն ալ, ըստ հետեւելին: —

Հայերէն լիզու	Ordinary Level
Արտերէն լիզու	Advanced Level
Անգլերէն լիզու	Ordinary Level
Անգլերէն լիզու	» »
Անգլիական գրականթ.	» »
Գատմութիւն	» »
Կինսարանութիւն	» »
Մաթեմաթիք	» »
Ֆիզիք	» »
Բէմիսարի	» »

Վահէ Գարենան G.C.E.ի քննութեանց մասնակցեցու 10 նիւթերով, որինցմէ ինը անցաւ յաջողութեամբ, ըստ հետեւելին: —

Հայերէն լիզու	Ordinary Level
Արտերէն լիզու	» »
Անգլերէն լիզու	» »
Անգլիական գրականթ.	» »
Գատմութիւն	» »
Կինսարանութիւն	» »
Մաթեմաթիք	» »
Ֆիզիք	» »
Բէմիսարի	» »

Ջեր նկատաժան կը յանձնենք որ առնուք ոչ միայն յաջողութեամբ, այլ մասնակցող մեր երեք շրջանաւարանները, անցան հետեւել յաջողութիւնները:

Տարւոյս ընթացքին Դեկտեմբերը 29-
9 Յունուար տեղի ունեցան մեր կիսամեռայ
քննութիւնները, իսկ Մայիս 19-31 ա-
մսովիրջի քննութիւնները Այս տարի մեր
240 աշտկերտներէն 15ը կը կրկնեն իրենց
գասարանները ուսմանց մէջ իրենց ան-
յաջազ ընթացքին պատճառաւ:

Իսկ 11 հետեւալ աշակերտները յառ
ջողութեամբ տարտած ըլլուրով Երկրոր-
դական վարժարանիս ամրազական ըն-
թացքը կ'որբանանան քիչ յատոյ իրենց
տարտաֆիւն գհայտականներուն: —

Արամ Ահաւառութեան

Հանձ Պօյտանեան

Թափփի Սափիեան

Սանիան Յակոբեան

Վիդէն Ներսէսեան

Աննա Փէթրութիս

Ռիմա Թումայեան

Սեդր Գանգաչեան

Սևանայ Ասրմանարեան

Վարդուհի Քուրքիսան

Տիանա Նալպանտեան

Մասնուար քծախնդրութեամբ հոգ տա-
րինք մեր աշակերտներու հոգառ-կրօնա-
կան գտատիտրական թեառն, թէ՝ քրիստո-
